դը աւելի զարգացեալ է և բարեկեցիկ, և խռովարար մտածութիւններէ հեռի։ Այն ազգը որ տգէտ և անկիրթ է, կամ թէ ըսել՝ չունի քաղաքականութիւն, չկրնար ունենալ ազգայնութեան ոգի. ունենալով քաղաքականութիւն և ազգայնութեան ոգի, եթէ չունի սէր միութեան, միշտ տկար է, և չկրնար գործ մը 'ի գլուխ հանել։

Այս ամեն խորհրդածութեանց պատճառ տուաւ մեզի հոկտեմբերի 19ին եղած յեղափոխութիւնը, որ Վենետկոյ տարեգրաց մէջ նշանաւոր օր մի պիտի համարուի։ Այն օրը մինչ ոսկեփայլ արեգական շառաւիղները հորիզոնէն վեր կը բարձրանային, և կը տարածուէին երկնքին գեղեցիկ կապոյտ դաշտին մէջ, ուր և ոչ փոքրիկ ամպ մը կ'երևէր, ահա Վենետկոյ մի պարանոցէն կ'ելնէին դուրս Աւստրիոյ Ինացորդ զօրքերը, և միւս պարանոցէն կը մտնէին Իտալական նաւերը զանազան ազգային դրօշներով զարդարուած։ Կրնայ մարդ մակաբերել, թէ ինչ տարապայման ցնծութիւն զգեցաւ ժողովուրդը, յիսուն տարուան լուծը վրայէն թօթափելով, զոր կ'աւետէին իրեն թնդանօթից և զանգակաց հնչիւնք։ Երբ պարզեցան սուրբ Մարկոսի հրապարակին մէջ Իտալական դրօշները, կեցցէ՛ ձայներով երկինք և երկիր կը թնդայր, զոր կը հնչէին Վիկտոր Էմմանուէլի, Իտալիոյ միութեան և Կարիպալտիին համար։ Շատ տարիներէ հետէ չէր տեսած սրբոյն Մարկոսի հրապարակը այսչափ բազմութիւն. և չէր եղած հանդիսատես այսպիսի համաշխարհական ցնծութեան։ Ոմանք ուրախութեան հետ արտասուք ալ կը խառնէին, մանաւանդ ծերերը, յիշելով իրենց հասարակապետութեան տէրութիւնը, զոր 1799ին կորուսին մեծին Նաբոլէոնի ժամանակ։ Բայց հիմա մոռանալով իրենց մասնաւոր օգուտը, հասարակաց օգուտը կը մտածեն։ Կ'ուզեն ամենքը միաբան Իտալիոյ միւս մասին հետ միանալ, Վիկտոր Էմմանուէլի կառավարութեան տակ։

Անկարելի է բերանով պատմել և գրչով ստորագրել ինչ որ կ'զգար ժողովուրդը իր սրտին մէջ։ Այն օրուան անպատմելի ցնծութիւնը նա միայն կ'ըզգայ, որ գիտէ և կը ճանաչէ ազգի մը ազատութեան յարգը։ Բոլոր քաղաքը ոտքի վերայ էր, տունները և հրապարակները զարդարուած դրօշներով և դիպակներով, ամենուն աչքը եկող ելոց վերայ, ականջը երաժշտական քաղցր նուագաց. ամենուն բերանը Իտալական ազատութեան եռանդուն երգեր, որոց մին կը դնեմք հոս իբր 'ի ճաշակ, և Ինացած հանդիսից մանր ստորագրութիւնը կը թողուք լրագրաց։

Հ. Մ. Բ.

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Արարեալ ի փաստաբանէն Անձելո Պրոֆֆէրիո, և յարմարեալ յեղանակ երաժշտէն Պրիննի՝ վասն զօրաց և ազգային պահանորդաց.

Ի շողշողիւն սուսերաց
Զարթեան դահք եւ ժողովուրդք.
Իտալացիք ի մարտ, մարտ,
Զայն մայրենի կոչէ զձեզ։
Թնդանօթից ի բոմբիւն
Ելէք սլասցուք ի վաշտ վաշտ,

Վառեալ ի սուր եւ սաղավարտ.
Կեցցէ արքայ յԱլպեանց ի Ծով։
Ցերիդանէ ի Տիկին
Ի Սիկանիոյ յերկիր Տոսկ,
Եվ Ժողովուրդ Լատինեան
Աստուած կամի, եվ յաղթեա։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։
Սավոյացին Պայարտոս
Բալեստրոսի [1] յաղթական,
Մեզ կարապետ արութեամբ
Ցահաւոր ռազմ խրախմիտ։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։
Ի բարձրադէտ դիտակաց
Գոչեն առ մեզ, — Ո՞վ կայ անդ։ —
Իտալիոյ եմք զօրականք
Ցաղատութիւն եւ ի մարտ։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։
Մեր են ափունքս սրխրալիք
Մեր ճանապարհք ծաղկաւէտք։
Դաշտք եւ ալիք, օդ, երկին,
Օտարականդ, վանեն դքեզ։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։
Ազգ աւսոնեան բարձր ի բազդ,
Անվրիպելի է քո աստղ։
Արքայն Վիկտոր երդուաւ զայն,
Չեղեւ նա բնաւ երդմնազանց։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։
Ըզբաշ առիւծն Վենետկեան
Գոռոզաբար ծածանէ,
Կոնտոլավարդ ծն դարձիր
Չերդ քո առեալ ի բերան։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։
Ի փառաց ցանդ ի շաւիղ
Ցիտալական երկիր քաջ,

1 Բալէսթրոս է աւան փոքր մերձ յԱղէքսանդրիա քաղաք Փիէմոնթի, ուր մեծամեծ նահատակութիւնս արար Վիկտոր Էմմանուէլ ընդդէմ Աւստրիացւոց յամին 1859, մինչև ընկալաւ 'ի պապէ կոչեցեալ գաղղիացի զինուորաց զտանապետի անուն։

Իսկ Պայարտոս է գաղղիացի զօրագլուխն ոմն, դուքս Սավոյայ, հռչակաւորն մեծամեծ քաջութեամբք, ծնեալ յամին 1476։ Համբաւաւոր դէպսաւ 'ի պատերազմունս ընդդէմ Սպանիացւոց 'ի Նարոլի յամին 1503, աղատեաց զՄիլան և զՇենովա, և արար բազում այլ գործս նահատակութեանց, մինչև կոչել սպանիս անէրիպաղ և անպարտ։

Սուրբ Մարտինեայ[1] փայլեսցէ
Փայլեսցէ նոր արեգակն։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։
Բաղմաղարեան ըզփափագ
Էնն զօրութեանց հանցէ յանդ.
Վատթարագոյն քան զբիւր մահ
Են նախատինք դերութեան։
Թնդանօթից ի բոմբիւն, և այլն։

Մարկոս Աւրելիոս դեռ նոր կայսր եղած առ Անտիգոնոս գրած թուղթը.

Մարկոս Ղերմէն բռնուած, առ Անտիգոնոս պաքսորուած, իրեն առողջութիւն՝ քեզի ալ ազատութիւն կը բաղձայ։ Հռոմայու ձանձրացուցիչ տաքէն փախչելու, ու Եբրայեցի լեզուով գիրք մը որ Արեգ քաղաքէն ինծի բերին՝ կարդալու համար եկայ հոս Սամոսիացւոց երկիրը։ Որչափ ալ արտորացի ճամբաս շուտ ընելու, այսու ամենայնիւ Ղերմն բռնեց 'ի Յալոն ամսուն 25ին՝ թուղթդ առած օրս։ Հռոդացւոց օրէնքներուն գրքին մէջ կը յիշեմ որ աս խօսքս կարդացեր եմ. Մէկը չհամարձակի խորհուրդ տալ ուրիշի առանց օգնելու։ Վասն զի խեղճութեան մէջ եղողը՝ խօսքով միայն չմխիթարուիր, թէ որ իրեն ճարը՝ մը չընես։ Աս ալ կար այն գրքին մէջ որ՝ խեղճը իր խեղճութիւնը պատմելով աւելի կը մխիթարուի, քան թէ ուրիշներէն մխիթարանք լսելով։

Կը գրես որ ատ տեղի դատաւորները բռնաւոր են, ու անոր համար ժողովուրդը խիստ կ'ատէ Հռոմայու ծերակոյտը։ Կը հաւատամ որ չարերն ալ ա-

1 Սուրբ Մարտինոս է՝ աւան փոքր մերձ 'ի Սուլֆիերինո, ուր խաչացեալ յաղթող հանդիսացան ընդդէմ Աւարիացւոց յամին 1859. մինչեւ գաղղիացիք խորտակեցին խաչառ զԹշնամին 'ի Սուլֆիերինո։ Վասն որոյ Ճակատամարտն այնր աւուր կոչի առ գաղղիացիս յանուն Սուլֆիերինոյի, և առ իտալացիս յանուն սուրբ Մարտինեայ։

ռիթ կու տան խստութիւն ընելու, մանաւանդ ատ կղզիին բնակիչները՝ որոնց համար հին առակը կ'ըսէ. Ամեն կղզեցիք չար են, բայց սիկիլիացիք ամենէն չարագոյն։ Չարերը այնչափ զօրացեր են, ու անոր համար լաւերը այնպէս մէկդի քաշուեր են, որ եթէ արդարութիւնը քիչ մը խստութիւն չընէ, չարերը կը տիրեն աշխարհքիս, ու լաւերը կը հատնին։ Բայց մեր դատաւորներուն խստութիւն ընելը՝ չէ թէ հռոմայեցի ըլլալնէն է, այլ անգութ ու անիրաւ ըլլալնուն համար։ Խելքս չհասնիր. բուն դատաւորութիւնը դից ձեռքը ըլլալով, որչափ ալ իրենց դէմ մեղանչենք՝ կը գթան վրանիս. իսկ մենք որ դատաւորութիւնը իրենցմէ փոխ առած ենք, յանցաւորներուն ըրածը մեզի դէմ չըլլալով ալ՝ կը պարծինք խրատութիւն բանեցընելու, ու անդթութեան անուն ունենալու։ Մարդ չէ անիկայ՝ ով որ մոռնալով իր բնութիւնն որ դիք զինքը հեզ ստեղծեր են, ինքը թունաւոր օձի ու կատաղի գազանի պէս կը վարուի։

Հռոմայու հիմնարկութեան երկոտասաներորդ տարին Հռոմուլոս առջի թագաւորը հրաման հանեց՝ ամեն դի, վոլկացւոց, սամնիացւոց, ետրուրացւոց, կապուացւոց, ու ալբայեցւոց երկիրները, որ ամեն աքսորուածները՝ հալածեալները՝ խեղճերը՝ Հռոմ գան, հոն ընդունելութիւն ու օգնութիւն կը գտնեն։ Թէ որ յիշողութիւնս չսխալիր, մեր հին տարեգրութեանց մէջ կար-